Արձանագրություն 3

ՀՀ ՖՆ կարիքների համար «ՀՀ ՖՆ-ԷԱՃԱՊՁԲ-21/8» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 19.11.2021թ. ժամը 14:00-ին:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ

Գ. Վարդանյան - ՖՆ տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության պետ

Անդամներ

Ա. Մարտիրոսյան – ՖՆ ծրագրերի իրականացման վարչության ֆինանսատնտեսական բաժնի գլխավոր մասնագետ

Տ. Գալոյան - ՖՆ տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության գլխավոր մասնագետ

Վ. Բանդուրյան – ՖՆ տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության ավագ մասնագետ

Ա. Հովսեփյան - ՖՆ տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության գլխավոր մասնագետ

Գնումները համակարգող

Ա. Աղաբաբյան - ՖՆ ծրագրերի իրականացման վարչության գնումների բաժնի պետ

1. **Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին**

Հաշվի առնելով, որ բացառությամբ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների մյուս մասնակիցների հայտերը մերժվում են՝ հանձնաժողովի կողմից գնահատվել են միայն առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների (1-ին չափաբաժնի մասով «Մովսեսյան» ՍՊԸ-ի, 2-3-րդ, 6-8-րդ չափաբաժինների մասով «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի և 4-5-րդ չափաբաժինների մասով «ԱԼՖԱ ԷՏԱԼՈՆ» ՍՊԸ-ի) կողմից ներկայացված հայտերը, համաձայն որի մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

1. «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հավելված 1.2-ում՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի 1.1.6 կետում որպես գրանցման երկիր նշված է «Հայաստան» /հավանաբար մասնակիցը նկատի է ունեցել «Հայաստանի Հանրապետություն»/, իսկ 4.5 կետի «ա», «բ», «գ» ենթակետերից ոչ մեկում նշում չի կատարվել,

2. «ԱԼՖԱ ԷՏԱԼՈՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերում չկա նշում առ այն, որ ապրանքների տեղափոխումը, բեռնաթափումը իրականացնում է մատակարարը /հրավերում նշված է եղել/,

3. «Մովսեսյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հավելված 1.2-ում՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի 1.1.6 կետում որպես գրանցման երկիր, իսկ 4.3.1 և 4.4.1 կետերում

որպես պետություն նշված է «Հայաստան» /հավանաբար մասնակիցը նկատի է ունեցել «Հայաստանի Հանրապետություն»/:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

2. Հանձնաժողովի կայացրած որոշումները

Հանձնաժողովը որոշեց

1. Կասեցնել գնահատող հանձնաժողովի նիստը 1 աշխատանքային օրով և ծանուցել «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ին, «ԱԼՖԱ ԷՏԱԼՈՆ» ՍՊԸ-ին և «Մովսեսյան» ՍՊԸ-ին՝ առաջարկելով հրավերով սահմանված ժամկետում շտկել հայտում առկա անհամապատասխանությունները:

2. Բացառությամբ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների (1-ին չափաբաժնի մասով «Մովսեսյան» ՍՊԸ-ի, 2-3-րդ, 6-8-րդ չափաբաժինների մասով «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի և 4-5-րդ չափաբաժինների մասով «ԱԼՖԱ ԷՏԱԼՈՆ» ՍՊԸ-ի) մյուս մասնակիցների կողմից ներկայացված հայտերը մերժել:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը

«ՀՀ ՖՆ-ԷԱՃԱՊՁԲ-21/8» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստը հրավիրել սույն թվականի նոյեմբերի 23-ին ժամը 12:00-ին ՀՀ ֆինանսների նախարարության վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Մ. Ադամյան 1:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Գ. Վարդանյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Ա. Մարտիրոսյան

_____ Տ. Գալոյան

_____ Վ. Բանդուրյան

_____ Ա. Հովսեփյան

Գնումները համակարգող՝ _____ Ա. Աղաբաբյան